

# Իզերի դեպարտամենտալ խորհրդի կողմից հաջորդ տարի մարզում կիրականացվեն նոր ծրագրեր

28.11.2017

Նոյեմբերի 27-ին Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանն ընդունեց Ֆրանսիական „Բժշկական օգնություն եւ զարգացում, կազմակերպության վերապատրաստումների դեկավար, առաջին բուժօգնության գծով բժիշկ Պիեռ Շիլինգերին: Կողմերի հանդիպման նպատակն էր՝ ամփոփել Գեղարքունիքի մարզպետարան-Իզերի դեպարտամենտալ խորհուրդ ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում 2017 թվականին մարզի առողջապահական ոլորտում իրականացրած ծրագրերը և պայմանավորվածություն ձեռք բերել հաջորդ տարվա անելիքների ուղղությամբ: Մարզպետի տեղակալը, ողջունելով հյուրի այցը, նշեց, որ այսպիսի յուրաքանչյուր հանդիպում կարևորվում է, քանզի դրա արդյունքում մարզի առողջապահական հաստատություններում կատարվում են որոշակի ներդրումային ծրագրեր: „Իրա ապացույցը մարզի բուժհիմնարկների վերանորոգումն է, բուժքույրերի աստիճանական վերապատրաստումը և բուժհիմնարկներին անհրաժեշտ պարագաներով հագեցած պայուսակների տրամադրումը, որը խիստ օգտակար է բնակչության շրջանում առաջին բուժօգնություն կազմակերպելու համար, - շեշտեց մարզպետի տեղակալը, համոզմունք հայտնելով, որ համագործակցությունը նույն արդյունավետությամբ կշարունակվի նաև հաջորդ տարի:

Իր հերթին Պիեռ Շիլինգերը գոհունակություն հայտնեց այն առումով, որ կատարված ներդրումները բոլոր ուղղություններով ծառայում են իրենց նպատակին, ապա խոսեց 2018 թվականի մարզի առողջապահության ոլորտում կազմակերպության կողմից իրականացվելիք աշխատանքների մասին: „Մենք կշարունակենք առաջին բուժօգնության պարագաներով հագեցած բժշկական պայուսակների և այլ սարքավորումների տրամադրումը այն բուժհիմնարկներին, որոնք դրա կարիքն ունեն: Նախատեսում ենք կազմակերպել վերապատրաստումներ երկու մակարդակով, որոնցից մեկը բուժքույրերի հիմնարար վերապատրաստումն է, իսկ մյուսը՝ հիվանդանոցների բժիշկների վերապատրաստումը: Նույն ակտիվությամբ կիրականացնենք նաև սահմանամերձ եւ հեռավոր բնակավայրերի բուժկետերի վերանորոգման աշխատանքներ, - ներկայացրեց Պիեռ Շիլինգերը :

Նա նաև առաջարկեց՝ վերապատրաստել բժիշկների մի մեծ խումբ, որն էլ իր հերթին պարբերաբար նոր գիտելիքներ կփոխանցի մարզի մնացած բուժաշխատողներին: Հաշվի առնելով „Բժշկական օգնություն եւ զարգացում, կազմակերպության կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքներն առ այն, որ Մարտունու բժշկական կենտրոնում աշխատում է համեմատաբար որակյալ կադրերով համալրված բժիշկների մեծ բանակ, Պիեռ Շիլինգերը առաջարկեց նույն կենտրոնում էլ ստեղծել այդ կառույցը՝ իրենց կողմից բուժհաստատությունը անհրաժեշտ պարագաներով վերազինելու և հագեցնելու պայմանով: Մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանը հավանության արժանացրեց առաջարկը, վստահեցնելով, որ այն կծառայի մարզի բուժաշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների բարելավմանը:

Հանդիպման ընթացքում տեղեկացվեց նաև, որ Սևան- Գրենոբլ համագործակցության շրջանակներում Գրենոբլի քաղաքապետարանը Սևան քաղաքի ԲԿ ֆիզիոթերապևտիկ կաբինետին է նվիրել 6700 եվրոյի արժողության սարքավորումներ:

Ֆրանսիական „Բժշկական օգնություն և զարգացում, կազմակերպությունը նախատեսում է հաջորդ տարի առաջին բուժօգնության վերապատրաստումներ անցկացնել նաև մարզային

ուստիկանության և հրշեջ ծառայության համապատասխան մասնագետների շրջանում: